

ծոթիւն, գժգոհոթիւն կեանքից, յոսեանսութիւն և գանդառ դպրոցական պայմաններից և այլն *),

Դպրոցական ինքնասպանութեանը զէմ շատ միջոցներ են առաջարկում. բժիշկ Քաֆէսը իր զեկուցման մէջ վերոյիշեալ կօնդրէսում առաջարկում է փիլտոսովայական զրոյցներ ունենալ աշակերտաների հետ ցոյց տալով կեանքի արժեքը և այլն։ Հարկաւոր է մանաւոնդ աշակերտաների մէջ դպրոցացնել իդէալիզմ, որը, ինչպէս ցոյց է տեղի պրոֆ. Եարոցկին, ահազին նշանակութիւն ունի մեր կեանքի մէջ։ Ամենամեծ մեր թշնամին՝ ևսասերութիւնը և ծանր նիւթական և առասարակ չնշին հարցերն են, որոնք գժւար բռոգէներն մեղ չեն կարող տալ հարկաւոր նացում ընդդէմ յուսանատութեան, յոնետեսութեան, որոնք տանում են մեղ զէպի ինքնասպանութիւնը։ Իդէալիզմը, որը կարող է լինել կրօնական ազգային, հասարակական և գիտական, ահա ամենազօրեղ

փիլիոլոգիական ֆակտորը մարդկային կեանքի մէջ, որը մնդ կարող է պաշտպանել շատ բարոյական և հոգիկան վորձութիւնների ժամանակի, Ապա ուրիշն՝ թէ ծնողները, թէ դպրոցը և թէ հասարակութիւնը պիտի դարձացնեն այդ իդէալիզմը նէնց իրանց սեփնական օպտին համար կրիտասարդ սերնդի մէջ վերոյիշեալ Պիրոգովին համաժողովի բաժանմանը առաջարկում է 1) ծնողների կոմիտէի մասնակցութիւնը ինքնասպանութեան հարցի ուսումնասիրութեան գործում 2) Առանձին ուշադրութիւն դարձնել աշակերտաների փիլիկական կրթութեան, վրայ, և 3) վերացում քննութիւնների սիստեմի և յառաջադիմութեան գնահատութիւնը անդի ունենայ ոչ թէ յատուկ հարցաքննութիւններով, այլ ուսումնական տարեայ ժամանակամիջոցում ստացած թւանշաններով։

Բժ. Ա. Վ. Ս. Ա. Բ. Ա. Ա.

ԽՈՐՀԻԳԻԱՑՑՈՒՆԵ ԺՈՂՈՎ ՀԵՅ ՏԳԸՆԴԻՌԱԹԵԱՆ 400-ՄՄԵԱԿԻ ԸՆԻԹՈՒ

I

Կովկասի հայոց Հրատարակ. Ընկերութեան վարչութեան նախաձեռնութեամբ, յունարի 28-ին երեկոյեան ժամը 8/^{1/4}-ին, թիֆլիսի քաղաքային գումայի զանդինում, տեղի ունեցաւ մի խորհրդակցական ժողով որին մասնակցում էին՝ թիֆլիսի հայական բոլոր հիմնարկութիւնների, և ապարանների կողմից եկած ներկայացուցիչներ՝ թւով մօտ 60 հոգի։

Այդ խորհրդակցական ժողովի նպատակն էր որոշել թէ ինչ ձևով պէտք է տօնել հայկական տպագրութեան 400-ամենալը, որ լրանում է այս տարի, այն է՝ 1912 թւին։

Ժողովը բաց է անցում Հրատ. Ընկ.

*). Մի քանի տեղերկութիւնները վերցրել ենք Վրաչեն, վետ.-ից № 2, 1912 թ.

Վարչութեան նախագահ բժ. Զարգարեանը, համառու ծանուցումով տեղեկութիւն է տալիս ժողովի օրակարգի մասին և առաջարկում է ընարել նախագահ և քարտուղարներ. բժ. Զարգարեանն ինքը ընարեւմ է այդ ժողովի համար նախագահ, իսկ որ պ. պ. Գ. Վարդանեան և Գ. Լուսեան՝ քարտուղարներ։

Նախագահը տեղեկութիւն է տալիս, որ տպագրութեան 400-ամենակի և առնասարակ տպագրութեան սկզբնաւորութեան մասին Հրատ. Ընկ. խմբագր. մասնաժողովի նախագահ հայր Աղանիանը պատրաստել է մի գրաւոր զեկուցում, որի ընթերցումը կարենը համարելով խողրի լուսաբանութեան՝ առաջարկում է ըստ այդ զեկուցումը։

Փողովականները ընդունում են այդ առաջարկը:

Հայր Աղանհանը կարդում է իր գիլուցումը, որ թէն կազմւած էր համառօտ, բայց ամփոփում էր իր մէջ այն ըրորթական անդակութիւնները և յայտնի բանակընների կարծիքները, որոնք դեռ ասրիներ առաջ հաստատապէս որոշել են, թէ հայկական տպագրութիւնը սկսւել է 1512 թւին և տպագրւել է հայերէն անդրանիկ զիրքը՝ «Պարզատումարի»:

Մինչ բուն խնդրի մասին լինելիք կարծիքների փոխանակութեան՝ ժողովականներից մէկը տրուոնչ է յայտնում թէ չթէն ժողովը բաղմամարդ է, սակայն ինքը չի տեսնում այդադի հոգևորականների, վաճառականների և գրականագէտների ներկայացուցիչների, որոնց ներկայութիւնը անհրաժեշտ է գտնում նա դրոծի օգտակարութեան անօակէտից:

Նախագահը յայտնում է, որ Հրատար. Բնիկիրութ. Վարչ. որոշման համաձայն այս անգամ է, որ հրաւիրել են՝ գրաշարների, տպարանատէրերի, մամուլի, գրպարոցների գանգան ընկերութիւնների և զրոյների ներկայացուցիչներ ամենից երկուական հոգի ժողովը ցանկութիւն է յայտնում, որ առաջիկայում գումարելիք ժողովներին՝ ի նկատի առնեին վերոյիշեալ խուերը և նրանցից էլ հրաւիրեն ներկայացուցիչների:

Սրանցից յետոյ սկսում է կարծիքների փոխանակութիւնը...

Թօսում է Ստ. Մալխասեան. նա առաջ է քրիում մի շարք փաստեր, որոնք, իր կարծիքով, բացատում են «Պարզատումարի» շարժական տառերով եղած տպագրութիւնը. Դրա ամենալաւ ալացուցը նա գտնում է նրա մէջ, որ «պարզատումարի» տառերը անհաւասար են և անկանոն դասաւորած և որ մի տողի տառը մըտնում է յաջորդ առղի տառերի մէջ: Բացի դրանից՝ տառերը միանդամայն նման են ձեռագրի տառերին և չունեն իրենց մէջ միօրինակութիւն: Այդ բոլորի հիման վրայ, Մալխասեանը գտնում է, որ «Պարզատումարը» էլլուստրացում է այս առաջարկը:

Պատումարը իսկական տպագրութիւն չէ, այլ՝ քսիլոգրաֆիա (փայտագրութիւն): Այդ ահսակէտից տպագրութեան 400-ամեակը լրանում է ոչ թէ 1912 թւին, այլ շատ աւելի ուշ, որովհետեւ առաջին տրագրւեած (շարժական տառերով) հայերէն գիրքը լոյս է տեսնել ոչ թէ 1512 թւին, այլ՝ 1565 թւին: Մինչ այդ նո ժողովականներին ցոյց է տալիս «Բաղմագէպր-ի և «Հանդէօ Ամառեայ-ի համարները», ուր արտապալած են «Պարզատումարի» էջերը, աւելացնելով, որ թէն ինքը անձամբ չէ տեսնել այդ զիրքը: Բայց իր հաթագործեամբ և իր ձևորի տակ եղած ուսումնասիրութիւնների հիման վրայ ինքը կասկածելի է համարում Պարզատումարի տպագրութեան անդրունիկութիւնը: Անաւանդ, որ նրա վրայ զրւած է զգեցաւա բառը, և առաջարկում է, առժամանակ թողնել 400-ամեակը տօնելու խնդիրը, ընտրել ձեռնահամերից մի մասնաժողով որ զրադելով այդ խնդրի՝ տպագրութեան իսկական լինել չլինելու մանրամասնութեամբ և մի որոշ եղբակացութեան գալուց յետոյ, երբ կապացուցի, որ «Պարզատումարը» տպւած է, շարժական տառերով՝ ապա հրապարակ դրւի 400-ամեակի յորելեանը:

Թօսում է պ. Լէօն: — Սա տեսնել է «Պարզատումարից» երկու օրինակ վիճանայի Մխիթարեանների զրադարանում: Սրա կարծիքը միանդամայն այլ բան է ալացուցում, միանդամայն հակառակը պ. Մալխասեանի ասածների: Ապացուցելով, որ քսիլոգրաֆիայով տպւում ննմիմայն թղթի մի երեսի վրայ, մինչդեռ «Պարզատումարը» տպւած է ոչ թէ քսիլոգրաֆիայով, այլ շարժական տառերով ճիշտ այնպէս ինչպէս տպւում են այժմ զրերը: Տառերի անհաւասարութիւնը բացատրում է նրանով, որ նրանք չինւած են փայտից և ձեռքով, որ և ամեննախ հաւանութեամբ նրանք անհաւասար կլինէին և ձեռքով շինածների Ձեռագրին մանութեան մասին էլ՝ նա առում է, քանի որ ննումը տպագրութիւնը համարում էր սատանայի

գործ՝ իւրաքանչիւր որ աշխատում էր այդ տառերը միանգումայն ձեռագրերի նմանեցնել, որպէսզի նրանցով տպագրուող զբքերը նման լինէին ձեռագրերի և յաջողութիւն գտնէին տարծւելու ժամանակ, այլ կերպ էթէ նրանք տպագրի նմանէին կը հարածէին և բացէ ի բաց կը մերժէին «Գրեցաւիշի» մասին էլ առում է հնաց այդ հիման վրայ էլ զրքիրի երեսին գրւում էր «Որիցաւ» (և ոչ տպագրեցաւ) որպէսզի միանգումայն քօղարկի տպագրութիւնը Այդօրինակ պատտօնանսերից յուայ. պ. Էջոն, առաջ է բերում մի շարք բանակըների կարծիքներ, որոնց հիման վրայ «Պարզատումարից տպագրութեան իսկութիւնը ճանաչել է մօտ քան տարի առաջ և հաստատել է ու վերջացել: Այսքանից յետոյ, աւելացնում է պ. Էջոն, վեր կենալ և առաջարկել թէ կազմել մի մասնաժողով, որը քննի այդ տպագրութեան իսկութիւնը նշանակում է առոշինչ համարել այն ուրոշումները, որ արւած են աւելի կարող ձեռնահաների և աւելի յայտնի բանասէրների կողմից քան այն, որ այսօր թիֆլուում նասած պէտք է չը անսած զրքի մասին քննութիւն կատարել: Դիմել Եւրոպային Վիեննայի Միսիթարիաններին՝ ծիծաղ կը յարուցւի, որովհետեւ նրանք այն ստորեան են համարւած «Պարզատումարից տպագրութեան իսկութեամբ և 1512 թւի սկզբնաւորութեամբ, որ այսօր ահա 400-ամեակի առթիւ լոյս են տեսնում զանազան շքեղ հրատարակութիւններ զանազան տեղերում:

Խօսում է Ա. Եղիկեան: — Սա կողմնակից է պ. Ա. Մալխասեանին, ժխտում է և 1512 թիւը և «Պարզատումարի տպագրութիւնը և նրա բովանդակութիւնը» Սրա կարծիքով՝ քանի որ Արդար դպրի գիրքը, գրւած է 1565 թւին, օրնութեան է արժանացել թէ հայոց կաթողիկոսի, թէ պապի և թէ Վենետիկի դուքսի կողմից, ընդունելի է համարում իրեւ անդրանիկ տպագրութիւն այդ գիրքը: Արհամարելով փայտը, փայտից ստացւած գիրքը,

մաղովակաների ուշադրութիւնը հրաշիրում է այն բանի վրայ, որ Եւրոպան տօնեց ոչ թէ քսիլոդրաֆիան, այլ տպագրութիւնը: Սա էլ առաջարկում է ընտրել մի մասնաժողով այդ խնդիրը քննութեամբ պարզեցու:

Դ. Եղիկեանին առարկում է բժ. Ե. Մինասեան նա կողմնակից է Լէօփ արտայատած կարծիքներին, նա պատասխանում է նզնկեանին, որ Եւրոպան տօնեց Գուտեմբրերդի հնաց շարժական փայտեայ տառերի գիւտը, որովհետև Գուտեմբրդն էլ իր առաջին տառերը շինել է սկրում փայտացից: Բժիշկը ստուգող մասնաժողովի ընտրութեան առաջարկը միանգումայն աւելորդ է զտնում, բանի որ ամեն ինչ պարզ են:

Այսուհետեւ խօսում են՝ Ա. Յարութիւնեան, Գ. Երիցեան, Ա. Աթոնասեան, Լ. Դանիէլեան, և ուրիշները: Լ. Դանիէլեան լսելով երկու կողմերի կարծիքները՝ իրեն կասկածի մէջ է գտնում, յարմար է տեսնում առաջարկած ստուգող մասնաժողովի ընտրութեան կարևորութիւնը:

Երկար վիճաբանութիւնից յետոյ խընդուղիքը սպառւած համարեւելով քւէարկում է և ձայների ահազին մեծամասնութեամբ ընդունուում է 1512 թւականը և որոշում է աօնել հայկական տպագրութեան 400-ամեակը:

Եհայ տեղի է ունենում խորհրդակցութիւն յորեկանի կատարման ձեի մասին թէ յորեկանը տօնելու է իրեւ ընդհանութիւնը հայութեան տօն և մասնակցելու են բոլոր աեղերում գտնուող հայերը, թէ՝ Կովկասահայերը ասանձին, թիւրքահայերը առանձին և այլն: Կարծիքների փոխանկառութիւնից յետոյ որոշեց յորեկանը սկզբունքով զանձնել համազգային, թողնելով իւրաքանչիւր երկրի հայութեան տօնել այն ինչ կերպ որ յարմար կը դառն տօնողները:

Մինչ այդ նախագահը կարդում է մի ձրագիր, որ վերաբերում է յորեկանի յաւերտացման և որը մշակել է Հրատ. Ընկ. Վարչութիւնը Մրագիրը ամփոփում

է իր մէջ հետևեալ կէտերը.—

1) Հրատարակել հայ տպագրութեան պատկերագրդ պատմութիւնը Ընդունւում է այս կէտը և որոշում է տպագութիւնը լինի մէկը ընդարձակ և թանկարժեք միւսը՝ համառու և հանրամատչելի:

2) Բանալ ցուցահանդէս, որտեղ ի ցոյց կը զրկին զանազան ժամանակներում և զանազան տեղերում լոյս անօած բոլոր հայ գրքերը և ապագրութեան զործի զարգացման հետ կապ ունեցող բոլոր իրերը: Այս առաջարկն էլ ընդունւում է, որի մասին հայոց Ազգագրական Ընկ ներկայացուցիչ պ. Ե. Լալայեանը յայտնում է, որ ցուցահանդէս կազմակերպելը իր վրայ է վերցնում. իսկ ուսուցչական Միութ, Նախագահ, պ. Գ. Վարդանեան տեղեկութիւն է տալիս, որ Միութ. Կենդ. Վարչութիւնը արգէն որոշել է հաւաքել այդ ցուցահանդէսի համար սկզբից մինչև այժմ լոյս տեսած բոլոր հայ դասագրքերի օրինակները:

3) Կազմակերպել յորելեանական դասախոսութիւններ Կովկասի զանազան տեղերում: Ընդունւում է:

4) Հիմնել հրատարակչութեան ֆոնդ՝ հայ հեղինակների գրւածքները հրատարակելու համար:

5) Հիմնել գրական ֆոնդ՝ հայ գրականագէտներին նպաստելու համար:

Հրատարակչական և գրական ֆոնդերը տեղիք են տալիս երկարատև խորհրդակցութեան, Խոսում են՝ Հ. Մելիքեանը, Ա. Աթանասեան, Ա. Արեգեան, Լ. Զարգարեան, Յ. Ալիխանեան, Յ. Սոլովյովը, Ա. Աղարաբը, Ա. Իսիդորեան, և ուրիշները: Կարծիքներ կան, որոնք առաջարկում են միացնել այդ երկու ֆոնդը և «Դարրագական-ուսուցչական» ֆոնդի նման ձեռնարկել մի ժողովարարութեան. կարծիք-

ներ կան, որոնք բացասում են հրատարակչական ֆոնդը և կողմանակից են միմիայն զրական ֆոնդի, և կարծիքներ էլ կան, որոնք ընդունում են և առաջարկում են իրեւուն էլ քւէարկել:

Հարցը ապառած լինելով քւէարկում է երկոք տեսակի առաջարկութիւնները զատ-զատ և ձայների մեծամասնութեամբ ընդունում է միմիայն զրական ֆոնդը: որի համար մասրամասը ձրագիր մշակելը թողնում է ընտրւելիք մասնաժողովին:

6) Հայ զրաշարների վիճակը բարեկարգել. — այս առթիւ գրաշարների կողմից եկած ներկայացուցիչ պ. Խ. Տէր-Յավհաննիսեան՝ համառու տեղեկութեան է տալիս առհասարակ գրաշարների կեանքի ծանրութեան, նրանց վիճակի դասութեան մասին և խնդրում է ժողովին աշխարհութան առնել զրաշարի վիճակը առողող 400-ամեակի առթիւ, իրեն մի առն, որ անմիջական կազ ունի գրաշարի հետ Խօսում են պ. պ. Գ. Վարդանեան, Յ. Ալունեան, Կ. Միքանեան և ուրիշները: 'Ի վերջոյ որոշում է ընտրւելիք յորեւեանական մասնաժողովի կազմի մէջ ընտրել նաև մի զրաշար և նրա հետ պարզապէս որոշել թէ Բայովի կարելի կը լինի բարեւանել զրաշարների դրաթիւնը:

Օրակարգի հարցերը սպառելով առաջարեց ընտրել մի յորեւեանական յանձնաժողով. որը կը կազմակերպի յորեւեանական տօնը և կը զեկավարի այդ առթիւ Հարկաւորւելիք բոլոր գործերը Որոշեց յանձնաժողովը կազմել 15 հոգուց, առաջարկեցնին թիկնաժողովի անունները, բայց ժամանակի ուշ լինելու պատճառով ընտրութիւններն մնացին յաջորդ անգամեան:

8. ԱՂԱԲԱՐ

၁၃၁၂၁၅၁၇ ၁၃၁၂၁၅၁၈

ԽՈՐՀԱԳԵՑՆԵՐՆ ՖՈԳԱԼ ՀՅՈՒ ՏՊԵՐՈՒԹՅԵՆ 400-ՄՄԵԿԻ ԸՆԹԱԼ

四

Քաղաքային դումայի գահը իրառվ, միեւըլքարի 8-ին, անդի ունեցաւ հայկական տպագրութեան 400-ամեակի յորբէիսկան խորհրդակցութեան շաբունակութիւնը:

Նախագահում էր թժ. Ա. Զարդարեան,
քարտուղարներ էին՝ Գ. Վարդանեան և
Գ. Անդրեան:

Ժողովի օրակարգն էր 1) Գրական
փոնդ, 2) Կարգադրիչ յանձնաժողովի
ընտրութիւնը:

Մինչ օրակարգին անցնելը՝ կարդաց-
ւեց նախորդ ժազովի արձանապրութիւ-
նը, որ և փաքրիկ նկատութիւնը հա-
ասաւէց:

Նախագահը յայնեց, որ առաջին ժաղկի սրուշան համաձայն այս անգամ հրատիրւել են նաև վաճառականներ, դերասաններ, գրադէաններ, նկարիչներ, արհեստագործներ:

Այսուհետեւ ժողովն անցաւ օրակարգի հարցերին։ Գրական փառդի մասին տռաջ եկան կարծիքները, որոնք առաջարկեցին Կորիգ վերաբննել աշու սրացումը։

Թօնիցին պ. պ. Հ. Մելիքեան, Ստ.
Լիսիցեան, Եր. Լուսյան և Աւրիշները, ո-
րանք պահանջեցին՝ պարզել գրական
փոնդի մանրամասնութիւնները, Կրտ-
բնոյթն, ապա անցնել ընտրութիւննե-
րին:

Նախագահն էլ կողմանկից է այդ տու-
ջարկութեան և յայտնում է թէ՝ որովհե-
տեւ առաջին ժաղովում միանգամայն չը
պարզեց Գրահին Փոնդ առաջ որոշումը՝
ուստի Հրատ. Ընկ. վարչութիւնը՝ այս
անգամ էլ այդ խնդիրը գրել է օրակարգի
մէջ՝ աւելի պարզաբնելու:

Շատերը խօսում են ըստ կարգի և
մանրամասնութիւնների մէջ մտնելու

համարում են աւելորդ. տուարկելով թէ՝
ամեն ինչ պարզ է և նախորդ ժողովում
արդէն շատ է խօսել այդ մասին:

Նոյնիսկ խօսել և պրշւել է, որ դա
չպէտք է ծառայի իրքն բարեզործութիւն,
այլ գա պէտք է լինի մի փոնդ, որը
պէտք է վարձատրէ դրականագէտների
գրական վաստակը և հարաբերութիւն
ապայ նորերը գրւելուն:

Առաջանկություն է՝ նորի զբաղել ընտրութիւններով, ապա անցնել վերաքընսութեան կամ հարցի լուսաբանութեան:

Զանից բազմութեամբ սրչուում է նախ կատառել ընտրութիւնները, ապա անդեալ գրական ֆոնի լուսաբանութեամբ:

Մինչ այդ պ. Հ. Մելիքիսեանն առաջարկում է ընարել երկու յանձնաժողով մեկը գույք տօնական—յորելիսանական, միւսը՝ դրական փոնդի համար դրամ՝ հանգստականից, պատճառաբանելով, թէ այդ ձևը նպատակահարմար է և իր կարծիքով գործի առողջութեանը նպաստող:

Գեր չքննւած այս առաջարկը, նախագահը յայտնում է ժողովականներին, որ ստացւել է մի զրաւոր յայտարարութիւն և կարեոր է համարում կարդալ Արշակունյաց կարգադրութիւնը:

«Մշակի» և «Արօթ-փ խմբագրութիւն» սերի կողմից լիազօրուած պ. Ա. Եղիկեանը այս անդամ գրաւոր յայտարարութեամբ նորից դիմումէ ժողովականներին, որ «Պարզաւումարի» և առնասարակ 400-ամեակի խնդիրը որոշել ձեռնահաւանացանց ընութեամբ, ապա անցնել 400-ամեակի տօնելուն, որից յետոյ միայն վերոյիշեալ խմբագրութիւններն և առնասարակ մշակականութիւնն առաջիր գոյացործակցեաւու.

Փողովակներից մեծամասնութիւնը այդ հարցը համարում է նախընթաց ժողովում քննած և վերջացրած և առաջարկում է կցել այդ յայտարարութիւնը՝ արձանագրութեանն և անցնել ընտրութիւններին։ Մի մասն էլ՝ պայում է, որ նախորդ ժողովում ամեններն նարց չի եղել յիշեալ խմբագրութիւնների պաշտօնական կարծիքների մասին, ինչպէս սխալմամբ յիշւած է այդ յայտարարութեան մէջ, այլ խօսել են՝ պ. պ. Մալխասնան Եղիկեան և Դանիէլեանն իբրև զուտ ժողովականներ։

Որոշում է կցել այդ յայտարութիւնը՝ արձանագրութեան Ատ. Լիսիցեանի հետեւալ բանաձևով՝ ժողովը լսելով «Մշակէ և Առորիս խմբագրութիւնների լիզոր պ. Ա. Եղիկեանի յայտարարութիւնը՝ գտաւ որ դրա մասին խօսել և որոշում է կայսցել նախորդ ժօղովում՝ այժմ կցել արձանագրութիւններին և անցնել ընտրութիւններին։

Փողովի անցնում է ընտրութիւններին, և ապագրութեան 400-ամեակի յորելեանական յանձնաժողովի համար գաղտնանի քէարկութեամբ և 53 ձայնի մասնակցութեամբ ընտրութիւնը հետևեալ 15 անձինք՝ բժ. Զարդարեան (48 սպիտակէ, 3 սկ.), Ա. Խատիսեան (45 սպ. 6 սկ.), Գ. Կաֆեան (43 սպ., 8 սկ.), Գր. Վարդանեան (42 սպ., 9 սկ.), տիկ. Արիեան (41 սպ., 12 սկ.) տիկ. Ալիքէգեան (41—9), Յ. Խուճունց (40—10), Յ. Ակունեան (40—11), Իս. Յարութիւնեան (39—11), Ա. Աթանասեան (39—12), Ե. Լալայեան (39—13), Լէօ (38—11), Շիրվանզարէ (38—12), բժ. Միսասեան (38—11), Նար. Դու (38—14). Բացի դրանից բաց

քէարկութեամբ ընտրութիւն երրեմ եղ. և Գարրիէլ Սունդուկեան յանձնաժողովի պատւառը անդամներ։ Փոխ անդամները ընտրութիւն՝ Աւ. Պողոսեան (32—19), Գ. Ճռնեան (32—19) և Կ. Տէր-Յովհաննիսեան (32—19)։

Ընտրութիւններից յետոյ վերաբնաւում է պրական—Փոնդի գաղափարը, վերջը որոշում է՝ մանրամասնութիւնների մըշշակումը թողմել բնտրւած յանձնաժողովի լուսաբանութեան։

Այսուհետեւ նորից անդի է ունենում պ. Ա. Եղիկեանի յայտարարութեան մասին խօսակցութիւն, ժողովականներից ու մասնք առելորդ են համարում նորից քըննել հարցը, քանի որ նախորդն ժողովում դրւել և մերժել է։

Ի վերջոյ պ. Մելօյեանը առաջարկում է հետեւալ բանաձևը։

«Ենկատի ունենալով այն հանդամանքը, նախընթաց ժողովում տպագրութեան ձիշու տարեթիւը որոշելու մասին հարց յարուցւեց և առկախ մնաց, ևս առաջարկում եմ յանձնարարել յորելեանական յանձնաժողովին» Հրատիրել ապագրութեան խնդրով պրագւած կոմպետենտ անձաւութիւնները տպագրութեանտարեթիւը ստուգելու և ապա կատարել տպագրութեան 400-ամեակը, որոշելով յորելեանի ձիշը օրը։ Մի հանգամնեք, որ կը զայ վերացնելու եղած տարածայնութիւնները և համագոյին այդ տօնը միացեալ ուժեղորդվ կատարելու։

Զի անցնումը ժողովը հաստատում է նախորդ ժողովում կայսցրած որոշումը ցրւում է գիշերայ ժամը 12-ին։

Յ. ԱՂԱԲԵՐ